

# Գեղարքունիքի մարզպետն աշխատանքային այցով եղավ Ճամբարակում

27.06.2017

Հունիսի 27-ին Գեղարքունիքի մարզպետ Կարեն Բոթոյանն աշխատանքային այցով Ճամբարակի տարածաշրջանում էր: Մարզպետը նախ եղավ Ճամբարակի պանրի և կաթնամթերքի արտադրությամբ զբաղվող արտադրամասերից մեկում, որը հիմնվել է 2016 թվականին, «Գուլինյան Ժիրայր», ԱԶ-ի և «Առաքելություն Հայաստան», բարեգործական կազմակերպության համատեղ ներդրումների արդյունքում: Ըստ արտադրության պատասխանատու Արթուր Լազարյանի՝ Ճամբարակի և տարածաշրջանի 7 համայնքների մոտ 100 տնտեսություններից օրական մթերվում է 4 տոննա կաթ, որից 1 տոննան մշակվում է իրենց արտադրամասում, իսկ մնացած 3 տոննան, հնարավորությունների բացակայության պատճառով, հանձնվում է այլ մթերողների: Արտադրության պատասխանատուն համոզված է, որ եթե՝ հնարավորություն լինի արտադրամասն ընդլայնելու, կընդլայնվեն նաև արտադրության ծավալները: «Այստեղ արտադրվում է լոռի և չանախ տեսակի պնիր: Իրացումը կատարվում է Հայաստանի շուկաներում: Բայց եթե աջակցություն լինի, մենք կարտադրենք նաև թեյ, մարինացված, կճուճով, հորած և այլ տեսակի պանիրներ և դրանով կաջակցենք նաև կաթ հանձնող տնտեսություններին»,- մարզի ղեկավարին ներկայացրեց Արթուր Լազարյանը:

Մարզպետը ծանոթացավ արտադրությանը, հետաքրքրվեց դրա ընդլայնման ժամկետներով և առկա խնդիրներով: Կարեն Բոթոյանը նշեց, որ կառավարությունը լուրջ ուշադրություն է դարձնում նոր աշխատատեղերի ստեղծմանը: Այս տեսակետից շատ կարևոր է Ճամբարակում նման արտադրամաս ունենալը: «Նմանատիպ փոքր ձեռնարկություններ մարզում շատ կան: Մենք այցելում ենք, ծանոթանում նրանց գործունեությանը ու փորձում որևէ կերպ աջակցել նրանց՝ մեր լիազորությունների և հնարավորությունների սահմաններում»,- իր խոսքում նշեց Գեղարքունիքի մարզպետը:

Մարզի ղեկավարն այցելեց նաև Ճամբարակում գործող «Արեգունի» ՀԿ, որտեղ ծանոթացավ շենքային պայմաններին, մասնակցեց «Արեգ» մյուզիքլային տիկնիկային թատրոնի ներկայացմանը: Մարզպետ Կարեն Բոթոյանը խոստացավ աջակցել կազմակերպությանն իր լիազորությունների սահմաններում, որպեսզի այստեղ հաճախող դպրոցահասակները կարողանան նորմալ պայմաններում ստանալ մշակութային դաստիարակություն:

Աշխատանքային շրջայցի ավարտին Ճամբարակի քաղաքապետարանում Կարեն Բոթոյանն անցկացրեց խորհրդակցություն տարածաշրջանի համայնքների ղեկավարների մասնակցությամբ: Նրանք մարզպետին ներկայացրին իրենց համայնքներին վերաբերող ընթացիկ հարցեր, կատարված և նախանշված գործողությունների մասին հաշվետվություններ: Մարզպետը հավաստիացրեց, որ իր գործունեության ընթացքում հաճախ է այցելելու համայնքներ՝ առկա խնդիրներին տեղում ծանոթանալու և դրանց լուծման տարբերակները քննարկելու նպատակով: